

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուշկինի անուան
 թանգարան 10 Ձր.
 վեցամսայ 5 »
 Արժանատի անուան
 անուան 12 »
 վեցամսայ 6 »
 ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք և չեն տրուիր
 —)(—
 Ծանոցներու տողը 20 սան-
 քիսէ կ'երեւին անկախ ան-
 գամներու համար 20 Օլո
 զնոյ կըրտայ :

ՇԱՐՋՈՒՄ

Նախակ և զրաւ զրկն
 Խմբագրութեան հասցիին
 —
 Редакция на вестникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔԵՆԱԲԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ԿՐՈՆՔԸ ԳՈՐԾԻՔ

Շատոնց գիտէինք ասոր այս-
 պէս ըլլալը: Այն զգացումը որ
 պէտք էր աշխարհի մէջ բարու-
 թեան գանձեր հոսեցնել, և
 վայրագ բնազդները շնչելով բու-
 լոր մահկանացուներէն կըրայրա-
 կան անհուն փունջ մը կազմել,
 հատու, անվրէպ գործիք մը
 դարձած է զայն շահագործող-
 ներու ձեռքին մէջ:
 Ինչպէս տէրտէրը զայն առաջ
 կը քշէ ժամոց մը ձեռք ձգելու
 համար. միտինարը դարձեալ ա-
 նոր անունով կը հարստանայ, և
 վեհապետը դարձեալ անով է որ
 կը իւրոտէ իր գոյնային քաղա-
 քականութեան մեքենան:
 Աւամբիւր, հսկայ ապուշի մը
 պէս, չի զգար, չտեսներ, այլ
 միայն կը հետեւի, օրէ օր իր
 վիճակը վատթարացնելով, մա-
 չելով, ինչպէս կը մաշի ամենէն
 սովոր գործին երբ շարաշար կը
 գործածուի:
 Սովորները իսլամութեան
 յենամ' յանուն Մուհամմէտի ծո-
 ցին՝ ամենէն վայրագ ծայրայե-
 ղութիւնները գործել տուած են
 իրենց ոչխարամիտ հպատակնե-
 րուն:
 Եւ միայն անոնք չեն. ու ալ
 աւելի ցաւազին կէտն ասիկա է:
 Ռուսիա, Պրանսա, Գերմանիա,
 և այլն, կրօնքի ամենէն մեծ շա-
 հագործողներն են: Հիւսիսի պե-
 տութիւնը այժմ շատ աւելի գործ
 կը տեսնէ իր բոքերով քան թէ
 իր զօրավարներով: Յիստին հա-
 զար նեստորականներու ուսու-
 բարիքն մէջ մտնելը քաղաքական
 ահագին նշանակութիւն ունի. և
 օրթոտութեան հապէշաստանի
 մէջ մտաքը, տարածումը, մե-
 ծաղոյն երաշխիքն է թէ հետո
 չէ այն օրը որ նեկուսներու աշ-
 խարհը, Ափրիկէի այդ Զուիցեր-
 եան ցարբու կայսրութեան մէկ
 գաւառակը պիտի կազմէ:
 Պրանսաի և Գերմանիոյ միջև
 այս պահու ահագին պայքար մը
 կայ, Ալլաա-Լոռէնի ինդրէն ա-
 զատ բան մը: Այս երկու տէրու-
 թիւնները իրարու ձեռքէ կը

քաշեն Արեւելքի քրիստոնեայ-
 ները. ո՞վ պիտի պաշտպանէ
 զանոնք: Իրաւոր, այս փութկո-
 տութիւնը կարի սրտաշարժ պի-
 տի ըլլար, եթէ իր մէջ չպարու-
 նակէր ամենէն ճիւղային շա-
 հագործութիւնը...
 Հայկական շարժերու ատեն
 ո՞ւր էր խելքերնին...
 Իսոյ թողունք այս կէտը,
 յայտնելու համար, թէ Անդ-
 լիոյ միտինարներուն գոր-
 ծունէութիւնն ալ, և նոյն իսկ
 Մ. Նահանգներու կրօնքի պաշ-
 տօնեայները, նոյն ձգտումը,
 նոյն դերը կը կատարեն. իրենց
 պատկանած տէրութեանց քա-
 ղաքական հաշիւները առաջ քշել:
 Աւելի ձեռքով ալ ներկայանան,
 իբր Պրանչիսկեան, Քարոսիներն
 կամ պարզ հովիւ, անոնք, բա-
 ճարձակ պէս կրնանք ըսել թէ
 ասիկ կեղծ զինուորներ են քան
 Քրիստոսի պաշտօնեայ, և իրենց
 կռիւը՝ հաշի, շահու կռիւը
 առաջ կը մղեն, իրարու գլխու
 զարնելով ո՞չ թէ երկայրի սու-
 ըրը, այլ Քրիստոսի խաչը, որ
 աւա՞ղ, շատ բան կորսնցուցած է
 իր նախկին բարձր համարու-
 մէն:
 Զլուելի է ինչ որ տեղի կու-
 եննայ յանուն կրօնի, և ամենէն
 սկիզբիկն իսկ խորին վշտով,
 ցասումով կը համակուի, տեսնե-
 լով թէ ամենքը, խոնարհ տէր-
 տէրէն սկսեալ մինչև վեհապե-
 տը, այդքան ցած շահագործում
 մը ընելու ասպարէզ կը գտնեն,
 մարդկութեան ստուար մասին
 տխրութեան շնորհիւ:
 Վ. ՀԻՒՐՄԻՒԶ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՆԻՈՒԹՆ ՎԱՐՁՔԸ

Արդէն գիտենք թէ այժմ բան-
 ւոր գասակարգը մարդկութեան
 մէկ ստուար մեծամասնութիւնը
 կը կազմէ. և բնական է որ աշ-
 խարհի տնտեսական ու ընկերա-
 կան բարօրութեան վրայ մեծ
 ազդեցութիւն ունենայ այդ կա-
 բուր տարրի նիւթական ու բա-
 րոյական կացութիւնը:

Սակայն ցաւալի է որ այսօր ո-
 չինչ այնքան տխուր է, որքան
 գործաւորի թշուառ կեանքը:
 Պատուաւոր և աշխատասէր
 բայց աղքատ արհեստաւոր մը
 որ դրամագլուխ ունենալու բաղ-
 դէն և վարկ ունենալու իրաւուն-
 քէն միանգամայն զրկուած է,
 կըստիպուի իր մկաններուն ուժը՝
 իր ճակտին քրտինքը վաճառել
 վաշխառու և իրապաշտ դրամա-
 սիրով՝ միշտ անարգար, միշտ
 անբաւական գնով:
 Եւ աշխատութեան այդ անար-
 գար ու անբաւական վարձքն է
 որ արտագրած է ու կարտագրէ
 մէկ կողմէ զայն թակզելի հարըս-
 տութիւններ, և միւս կողմէ՝ յա-
 րաճուն ու անտանելի աղքատու-
 թիւններ:
 Հնարամիտ հանճարներ հետզ-
 հետէ նոր մեքենաներ՝ հրաշա-
 գործ անիւներ ստեղծելով կը
 զննեն հարուստի տրամագրու-
 թեան ներքեւ, և սա՛ իր աշխա-
 տաւորներուն թիւն ու թոշակը
 զեղչելով, հանդարտ խոճով կը
 լեցնէ փորն ու դրամակազը:
 Իսկ բանուրը փոխաբէն իր
 քրտնաթոր ու տաժանելի աշխա-
 տութեան՝ հազիւ վատ և անբա-
 ւական մարմնաւոր սնունդ մը ճա-
 րելով՝ զրկուած է մտաւոր ու ըն-
 կերական աւելի կազդուրիչ ու
 մաքուր կեանքէ, և կը ներկայա-
 ցընէ տանեկիներորդ դարու
 այն տոճոյն ու արբեցող աշխա-
 տաւորը, որ մաշած ու հիւժած է
 թէ՛ Ֆիլիքսայէս և թէ՛ բարոյա-
 պէս:
 Մեր քաղաքակիրթ աշխարհի
 արտագրողը իր կեանքի ու ապ-
 րուստի պիտոյից և հարուստի
 վարկին ու վայելից գերին է: Ի
 դուր կը աքնի խղի զինքը պըր-
 կող կապերը: Խուլ բայց ահաւոր
 կռիւ մըն է որ կը մղուի գործին
 ու դրամին միջև: Սակայն դժ-
 բախտաբար, զոնէ առ այժմ,
 կռիւն անհաւասար է և տկարը
 ընկճուած. վասն զի անթու-
 թիւնը կը ստիպէ զինքը կարճ
 ապստամբութիւններէ ետք գլուխ
 ծռել ամենէն անիրաւ. պահան-
 ջը մննելու:
 Հակառակ մեր հսկայ դարուն

յառաջգիմական ոգւոյն, դրամն
 ու գործը գեռ վերջնականապէս
 չեն հաշտուած: Զօրաւորը իր
 երջանկութիւնը կորսնէ տկարի
 տառապանքին մէջ. և նիւթա-
 պաշան իր հարստութիւնը կը
 գունէ բանուորի զրկանքին մէջ:
 Դրամը անարգել տիրապետած
 է իշաւունքին. և մարդկութեան
 գրեթէ երեք քառորդը անխնայ
 մատնուած է թշուառութեան ա-
 մէհի ճիրաններուն:
 Սակայն ընկերականութեան
 այս ցաւն անբուժելի է միթէ:
 Մեր ընկերային ու տնտեսական
 բոլոր այս կնճոտ խնդիրներն
 ընդ միշտ անլուծելի մնալու դա-
 տապարտուած են. անշուշտ ո՛չ:
 Եթէ մարդկային ընկերութիւ-
 նը պիտնայ արդարութեամբ գնա-
 հատել ու վարձատրել իր գոր-
 ծաւորը, շատ պիտի նպաստէ աշ-
 խարհի ոչ միայն նիւթական այլ
 և բարոյական անդորրութեան:
 Լաւ վճարուած բանուորին ու-
 չիմ զաւակը, որ այժմ ստիպուած
 է բոպիկ ու զլխաբաց փողոցները
 շրջիլ, պիտի երթայ բազմերու
 այն դրասեղանի առջեւ, որ այժմ
 գրեթէ հարուստի առանձնաշնոր-
 հումն է:
 Ժողովուրդը նուազ դժբախտ
 պիտի ըլլայ, եթէ իր մեծամաս-
 նութեան շարքաշ կեանքի պայ-
 մանները բարեփոխուին:
 Երբ գործատէրն այնքան ար-
 գար և առատաձեռն ըլլայ՝ որ-
 քան գործաւորը հաւատարիմ և
 անձնուէր, մարդկութեան առ-
 ուպանքը տակաւ պիտի մեղմա-
 նայ, ընկերային ազէտները պի-
 տի նուազին ու անթութիւնը
 հետզհետէ պիտի անյայտանայ:
 Եւ այն աստեմ մարդկային ըն-
 կերութիւնն աւելի հաստատ քայ-
 լերով պիտի ընթանայ դէպի հոն
 ուր կը գիմէ գարբրէ ի վեր, և
 հաւանօրէն աւելի շուտ պիտի
 հասնի իր վսեմագոյն նպատակա-
 կէտին. իսկական ազատութիւն,
 կատարեալ հաւասարութիւն և
 անկեղծ եղբայրութիւն:
 ՏԻԳՐԱՆ ԱՃԵՄԵԱՆ
 —)(—

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Թաւրիզ, 1 Սեպտ.

Էմիր-Նիզամ. — Բարեգործութիւնը շահագործվում է :

Քաղաքիս դատաւոր Էմիր-Նիզամը ամենաազդեցիկ է. խորամանկ պաշտօնականից մինչն է, ուսանելի բարեկամ եւ նրանցից վարձատրված :

Ատրպատականը կառավարելու համար ամենից յարմար եւ ընդունակ մարդն է նկատվում. ասանեակ տարիներ անաղ զարձակ Ատրպատականում դատաւոր լինելով հասարակութեան մէջ առ սարսափ էր թողել, անխնայ եւ անզիջող ամենածանր պատիժներ էր ենթարկել չարագործներին :

Թէեւ այժմ այնքան անզիջող թիւններ չէ գործում, բազայն նախկին վարժուհիք, ահ ու սարսափը այն աստիճան խոր արմատներ է գցել հասարակութեան մէջ, որ այդ սպաւորութեան տակ, կառավարում է նրանք, եւ ասում են՝ թէ նրա չափ Ատրպատականը լաւ կառավարելու ընդունակ մարդ գոյութիւն չունի Պարսկաստանում :

Եւ ահ այս միակ ազդեցիկ մարդը այսօր իրաւամբ ընտանիքով եւ անձնական բժիշկը իրաւ ընտանիքով, Թաւրիզից հեռացնում են զէպի իրաւ հայրենիքը — Բրդաստան :

Հասարակութեան մէջ իրօնում է թէ Էմիր-Նիզամը պաշտօնից հրաժարվելով, հայրենիքում հանգստանալու է :

Չըզլեանք թէ այս լուրը որ աստիճան ճշմարիտ է, սակայն իրաւ մտքիկ մարդկանց հետանալը ստոյգ է :

Այսպէս թէ այնպէս, այս զէպիքը ցոյց են աւելում թէ Թաւրիզը վաղ թէ ուշ թափաքանք է լինելու արտաքին անցքերի եւ ստաւարանների, մանաւանդ թէ Էմիր-Նիզամի հրաժարվելը իրականութիւն դանէ :

Քաղաքումս գոյութիւն ունի կանանց երկու Բարեգործական Ընկե-

րութիւն, մին Ատրպատականի եւ միւսը Թաւրիզի ներքինը, այս վերջինը աւելի հարուստ է եւ աւելի արդիւնք է ցոյց տալիս :

Յայտնի է որ անցեալ տարի Սալմաստում ապստամոտ Տաճկաստանցի գաղթականներին յայտնի պատճառներով Պարսից կառավարութեան կողմից արգելվեց Սալմաստում բնակվել: Նրանց հսկողութեամբ քաղաք բերին եւ ցրվեցին շրջակայ երկք գիւղերում, մի մասն էլ միաց տեղացիներին մօտ իբր ծառայող :

Առաջին առթիւ քաղաքացիք լաւ վերաբերվեցին զէպի գաղթականները, 3—400 հոգու համար ամեն օր սնունդ էին հայթայթում, շորեր նւիրում: Բժիշկ փաշահանն էլ ձրիաբար դարմանեց հիւանդներին, զրեթէ ինքնաբերաբար :

Այս տարի զգիւղերում ցրված գաղթականները մի քանիսը գալիս են քաղաք եւ Լիւլաւայի եկեղեցու բակում ապրում. թէ ասով եւ թէ վերջը նրանց միշտ օգնել է Թաւրիզու Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը: Այդ վերադարձողներից մի քանիսը հիւանդանոց են, եւ նոյն ընկերութեան նախագահուհին փոխանակ միեւնոյն թաղը բնակվող հանրածանօթ բժիշկ փաշահանից խնդրելու, զիմում է Ղալայի հեռաւոր թաղը բժիշկ Ասլանեանցին: Մենք այստեղ երկու բժիշկներին մէջ խորութիւն չենք գնում, միայն նախագահ Տիկինով կողմից ցոյց տրված խարութեան բուն պատճառն ենք ուզում իմանալ:

Որովհետեւ, բժիշկ փաշահանց աւելի մօտ էր, ինչ հարկ կար նախագահ Տիկինով խեղճ հիւանդներին, կէս օրվայ սաստիկ շփոթում արեւին շրկել մինչեւ Ղալայի հեռաւոր թաղը: Արդեօք բժիշկ փաշահանց փող էր պահանջելու եւ բժիշկ Ասլանեանց ոչ, այս մասին զիմով էր փաշահանցին: Մենք որչափ զիտենք, բնաւ զիմում չէ եղել բժիշկ փաշահանցին, որը, շատ յոյս ունենք թէ չմեթելով դարձեալ ձրիաբար դարմանալու էր հիւանդ գաղթականներին:

պատասխանները շատ կծու եւ արհամարական էին թուրք գաղաւթներին համար. մանաւանդ գաղաւթազի որի հարցերին ուղղակի իրան զիմելով էի պատասխանում, առանց կարեւորութիւն աւելու նրա բողոքներին, որ նա յայտնում էր թէ ես իրանում չունեմ ուղղակի գաղաւթազին զիմելու, այլ պարտաւոր եմ գաղաւթներին զիմել:

Վերջապէս գաղաւթները տեսնելով որ իմ արհամարանքը, յանդդնութիւնը ու կծու խօսքերը չափից անցնում են, գոնէ իրանց համար անտանելի է դառնում այդ բոլորը լսել եւ կող տալ, մանաւանդ որ լսում էին եւ թղթակիցները, դատը ընդհատեցին, մեզ ուղարկեցին բանտ: Մի երկու շաբաթ անցաւ, նորից կանչեցին: Այժմ թղթակիցներն էլ չը կային: Թուրքերը սրտն էին փակ տեսնել մեր դատը, որը սովորաբար տեսում էր մի քանի րոպէ: Հէնց որ ծագրում կամ մի քանի արհամարական խօսք էի ստում թուրք կառավարութեան եւ գաղաւթների հասցէին, իսկոյն ընդհատում էին եւ մեզ ետ ուղարկում:

Մի օր գաղաւթները շատ ծիծաղելի գրութեան մէջ ընկան: Մկրտիչը ինձ շնորհակալ յայտնեց որ ներսիմ իրան. ինքը մեղաւոր չէ. պրօվակացիօր Արմենակը (մուխրի) իրան

Մենք չենք ծանրանում այն կէտի վրա՝ թէ ինչո՞ւ համար հիւանդները դարմանել են աւելի բժիշկ Ասլանեանցին եւ ոչ թէ փաշահանցին: Այս հարցը իրաւ կարեւորութիւնը կորցնում է հետեւեալ հարցի առաջ: Ինչո՞ւ համար թուրքու Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը բժիշկ Ասլանեանցին վճարել է քաւրուման, զարմանի փոխարէն, քանի որ ընկերութիւնը կարող էր օգտվել բժիշկ փաշահանցի բարի արամադրութիւնից եւ փող չը վճարել: . . .

Այս հարցն էլ մի կողմ թողնենք: Ուրիշ հարց. — Ինչո՞ւ համար բժիշկ Ասլանեանցին յանուն ընկերութեան գրաւոր շնորհակալութիւն յայտնել, քանի որ նա ստացել է իր ծառայութեան փոխարժէքը, եւ թերեւս մի բան էլ աւելի:

Եթէ շնորհակալութիւն յայտնելը պարտականութիւն էր համարվում, ինչո՞ւ համար նոյն պարտականութիւնը անտես առնվեց բժիշկ փաշահանցի հանդէպ, որը իրաւունք ունէր զէթ թերաւանցի շնորհակալութեան արժանանալու: . . .

Այս տխուր երեւոյթը, եթէ անհատներին կողմից գործված տեսնելնք, այնքան ցաւ չէ ինքզնիքով, սակայն երբ մի ընկերութիւն է գործում այս զեղծումը, ընկերութեան եւ գաղթականներին շահը ոտնակոխ անելով, հետեւում է կրքի, բարեկամական եւ խնամիրական անցուկ մտքերի, չենք կարող զսպել մեր զայրոյթը, եւ յանուն Թաւրիզիցիներին հաշիւ չը պահանջել նոյն ընկերութեան վարչութիւնից, մանաւանդ ընկերութիւնը իրան եւին գործիք անող նախկին նախագահ Տիկինից:

Եթէ Տիկինը չը բարեհաճի մինչեւ երեք ամիս պատասխանել, մենք պարտաւոր ենք իրաւ կողմից պատասխանել եւ երեւան հանել այն շարժառնքները, որոնք ստիպել էին Տիկինը վարվել յիշված խնդրի մէջ ընկերութեան եւ մարդկութեան շահերին բոլորովին հակառակ ուղղութիւնով:

Այսպիսի հանրային հաստատութեան մէջ միթէ՞ Տիկինը ուզում է համոզել էր որ ամեն բան ճիշդ ասի, եւ այդպէսով բոլորը կազատվին, գործն էլ չի վիսափի: Ինքն էլ հաւատացել էր եւ խոստովանել: Բայց հիմա ուզում է իր մեղքը քաւել: Մկրտիչին խորհուրդ տալ թէ ինչպէս կարող է իրաւ մեղքը քաւել:

Մկրտիչը պատմեց նախագահին Արմենակի առանձնը, իրան հետ մի սենեակում նստելը եւ համոզելը որ կառավարութեան ուղածի պէս ցուցմունք տայ:

Օգտվելով Մկրտիչի յայտարարութիւնից, ծագրելով զիմեցի գաղաւթազին այս խօսքերով — Պարոն գաղաւթազ, տեսնում էք, որչափ օրինաւոր կառավարութիւն է ձեր կառավարութիւնը. լրտեսին գնում է մի ուրիշ բանտարկեալի մօտ, որին սպանախիքով եւ սուտ ցուցմունքներ տալ, լոկ հայերին պատժելու համար, եւ այդ լինում է ստորկանութեան նախարարի կողմից: Բայց ինչ եմ ասում, ուրիշ ինչ կարելի է սպասել հօշակաւոր աւազակապետ Մուսա պէյի ընկերներին, որոնք նրան արգարացնող գաղաւթները են եւ թուրքաց Սալմասնի հաւատարիմ ծառայողները: Թէեւ փոստածի Արմենակը ինձ եւ այս պարոններին այնքան վիսա հասցրեց, ձեր պաշտօնականներ ձեռքում գործիք

հաստատել ֆրանսական աստորկնոց վաս կա՛յ:

ՄԻՐԶԱ

Պոսքըն, 8 Հոկ.

Եպիսկոպոս մըն ալ ունեցանք առանց մեր կամքին: Հակառակ քուէ տուինք, բողոքեցինք, օգուտ մը չըբաւ: Հայրիկ դարձեալ իր Սարածեան եպիսկոպոսը մեզ զրկեց: Իր վարդապետութեան օրէն կը ճանչնանք զինքը եւ չենք մոռցած՝ եկեղեցւոյ մէջ իր մասնակցութիւնով կատարուած աթոռներու եւ փայտերու ճակատամարտը:

Ոչ ոք մեզի դժուարահաճ բժախիդիներու տեղ պիտի գնէ երբ խորհի թէ Պարսկաստանէն դժգոհութեան նոյն տրտունջները բուժեցան: Ինչպէս հոս հոն ալ Սարածեանի հօտ կառավարելու կերպը ուրախաւիթ կողմ մը չունեցաւ. ուստի մենք պատճառ մը չունինք գրկաբաց ընդունելու Հայրիկէն նշանակուած այս ընդհանուր հովիւր: Հայրիկ կը մոռնայ թէ մեր եկեղեցւոյ օրէնքին համեմատ, ինք, եկեղեցականութեան խնամարհողոյն աստիճանէն ս'սեալ, միշտ ժողովուրդին համաձայնութիւնովն է որ բարձրացած է, եւ նոյն քուէն է որ զինքը այսօր կը բաղմեցնէ Ս. Գրիգորի աթոռին վրայ: Ինչո՞ւ ուրեմն մեր կանխադոյն հաւանութիւնը առնելէ առաջ, տեսակ մը ճնշում կը բանեցնէ մեր վրայ, եւ պարզ կոնդակով մը կը վճռէ. «Տ. Ս. Սարաջեան վարդապետը եպիսկոպոս ձեռնադրելով, իբրեւ ընդհ. հովիւ Ամբրիկալ յղեցի այդրո՛ւ»:

Ամբրիկալի հայուն համար այնպիսի հովիւ մը պէտք է, որ

գառնալով, այնու ամենայնիւ ես յայտարարում եմ, որ դուք, Արմենակի տատնեղը այնքան էլ հաւած իւզի տեղ չընդունէք եւ նրա սուտ ցուցմունքների վրա անմեղ մարդկանց չը դատապարտէք: Արմենակը շատ բան չէր իմանում. նա մեր ձեռքին լոկ գործիք էր. նա ձեր պաշտօնականների սպանախիքներից վախեցած՝ իր կեանքը փրկելու նպատակով, շատ սուտ բաներ ասած կը լինի: Իբր պայցոյց որ Արմենակը մեր ձեռքում լոկ գործիք է եղել, եւ ոչ կարեւոր ու շատ բան զիտցող գործիչ, ահա Մկրտիչի խոստովանութիւնը լսեցէք, որ նա երգելով ասաց որ իր ասացին ցուցմունքը եղել է Արմենակի խոստովանելի եւ սպանախիքների ազդեցութեան տակ: Ես ինքս առաջարկում եմ Արմենակին անմեղ ճանաչել, ազատել, թէեւ ինձ եւ ուրիշ մի քանիներին հասցրած վիսաի ու իր դաւաճանութեան համար, ես կուզէի որ դա ոչնչանար: Այս ձեռքով ես ուղեցի Արմենակի յեղափոխական նշանակութիւնը նստեցնել, եւ նորա ցուցմունքների կարեւորութիւնը ոչնչացնել:

(Շարունակելի)

ՎԵՐԳ-ՊԱՏԻԿՈՎԻ ՅՈՇԱՍԱԿԱՐԱՆԸ (42)

Այս բոլորը ըմբռնելուց յետոյ, ինձ միւս էր այնպիսի ուղղութիւն բռնել, որ իմ գաղաւթազական յեղափոխական դատի գոյն ունենար, տաճկահայ ժողովրդի բողոքի արտայայտութիւնը լինէր եւ թէ իմ յարաբերութիւններս այնքան չը լարվէին ուս կառավարութեան հետ, որ արածս մեղմանար եւ ես նորից կարողանայի օգտակար լինել հայկական յեղափոխութեան:

Վերջապէս այդ օրը Մաքսիմովը հաղորդեց որ ինձ համար փաստարան վարձել են Միւսկոն Թնկրին, որը եւ անվաճառ զնայանաւոր հովանաւորութեան տակ, ինձ ազատ կերպով պաշտպանել կարողանալու համար: Երկրորդ օրը Թնկրը մի ոստիկան չափուչի հետ եկաւ ինձ մօտ, հետս ծանօթանալու. մի քանի հարցեր անցնի տաճկերէն լեզուով. ես հայերէն պատասխանեցի. քաջալերեց ինձ եւ գնաց:

Մի քանի օր յետոյ, մենք կրկին գուրս եկանք գաղաւթները առջեւ. առաջին օրը մի քանի լրագրիներ թղթակիցներ էլ ներկայ էին, թէեւ գաղաւթներին իջանցքներում եւրակում էլ շատ մարդիկ կային, բայց նրանց ներս չէին թողնում: Այդ տեղ էլ իմ

եկեղեցական հմտութիւններէ զատ կառավարելու ձեռքը միա- ցնէ իր անձին վրայ : Ահա այդ թանկագին յատկութիւնն է որ կը պակսի իրմէն . և ասիկայ հաստատելու համար նոր փոր- ձերու պէտք չկայ :

Անոր համար է որ Սրբազանը գեռ չհասած՝ դժգոհութիւններ և նոյն իսկ բողոքի ձայներ սկը- սած են լսուիլ ամէն կողմէ : Այս պայմաններու տակ , չի կարծուիր որ մեր նոր ընդհ. հովիւին պաշ- տօնավարութիւնը մեր յոյսերը պակսէ , և կամ նոյն իսկ ու է տեսականութիւն ունենայ :

ԼԷՕ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

—)(—

Դեռ որքան տարփանք կը յիշեմ ու անուշ երազի մը պէս մտքիս կը պատկերեմ այն օրերը , կեանքի այն թանկագին շրջանն որ մանկութիւն , հրեշտակային կեանք կը կոչուի : Երբ հէզ մայ- րիկս իր մայրական ամենաքաղցր գորովով ձեռքէս բռնած , տարին մէկ քանի անգամներ այդ հայ գիւղը , լուսապտուղ Ս. Սահակայ ազբիւրին ու խոր կերթար , որքան ցանկութեամբ կը մտաբերեմ այն աննման զորովը , զոր ցոյց կուտար այս առիթներուն : Լուսապտուղ Ս. Սահակայ փոքրիկ ազբիւրը , փափշէն գիւղի արեւելակողմը , բարձրագուլ Ս. Բժշկի ստորոտը կանանչներով գունաւորուած ու ծաղիկներով զարդարուած սի- բուն մարգագետնի մը եղբրք , ջուխտակ մը ուռնիի ներքեւ յուշիկ յուշիկ խոխոջացող զու- լալ ու անուշ ջուրիկ մէջ : Այնքան համեղ ու անուշ է այդ Ս. ազբիւրի ջուրը , որքան սիրելի և սրտի ու մտքի մօտիկ է իր անուա- նակցի Սահակ Պարթև մեծ Հայ- րապետին անունը Հայաստանի ժողովրդեան : Աւ ի՞նչ աւելի յարմար անուն ու նուիրագործում այդպիսի անմահ հայրապետի մը , պարթև և հօր մը յաւերժական յիշատակին՝ քան ժողովրդական այն անկեղծ յարգանքն ու սէրը , որով կը վերաբերուին մեր հայրեր ու մայրերը և Հայաստանի ամ- բողջ ժողովուրդը դէպի այդ մեծ դէմքը , անոր յիշատակին նուիր- ուած վանքերին , վայրերին , ազբիւրներին , որոնք ամենն ալ հաւասար ու տասեղիներ են , առնելով անխտիր «Լուսապտուղ» մականունը : Տասն և հինգ դարու այդ ժողովրդական սուրբն իր յիշատակն այդքան անքակտելի դրոշմած է հայի սրտին մէջ , որ մեր մայրիկները զայն կը յիշեն միշտ իբրեւ աչքի կատարեալ լոյս տուող :

Որքան անգամներ լուսապտուղ Ս. Սահակայ այդ անուշ ազբիւ- րին շուք տուող ուռնիներին հո- վանիին տակ , հէզ մայրիկս իր մայրական գլխու ձեռքերով այդ անմահական ջուրով աչքերս ու երեսներս հաւատաւորի մը ամե-

նայն ջերմեռանդութեամբ կեն- դանի լոյս խնդրած է իր ան- բախտ մէկհատիկին համար . . . րանի՛ք քանի անգամներ ժամերով այդ Ս. ազբիւրի շուք լուսած հմայիչ կանանչներ ի մէջ թաղ- ուած՝ երաւած ենք անսնկ մեր սպիտակմորուք ու ճերմակձի Ս. Հայրապետի արիւրը , զոր կը նկարագրէր ինձի մայրիկս իր պարզ ու անպաճոյճ անուշ եղա- նակով . ու մաւրական անարատ փափաքով Ս. Հայրապետէն կը խնդրէր «աչքի լոյս» ու «մաքի բացութիւն» . . . : Աւ այսօր հե- ոու հայրենիքի անուշ հոգէն ու ջրէն , հեռու անոր նուիրական յիշատակներէն , վտարանդի Գա- նուրի մէկ անձանթ եղբրքին վրայ , անդիմադրելի կարօտով կը յիշեմ այն ամեն յիշատակ- ները , որոնց խորք մեր սրտե- րին ու հոգիներին մօտ այնքան իրականութիւններ կան թագնը- ուած , ու այս կարօտը՝ երեւակա- յութեան հանդէպ կը պատկերէ կարծես որոշ դժիբով այն ամեն ցայտակարի նկարները , որոնք վը- տորանդիի մը համար այնքան թանկագին են :

1882 Մայիսի երկրորդ եօթ- նակի շաբաթ իրիկուն մը՝ այլևս զպրոցական ամէն հոգեբէն ա- զատ՝ մէկ երկու օր հանգիստ ու ազատ ապրելու փափաքով՝ մեր հանդուցեալ բարեկամ ազնիւ Տուտուխեանի և ուրիշ երկու բա- րեկամների հետ , որոշեցինք եր- թալ Պիթիւրի արեւելահիւսիս , Իշկեւին լեռան ստորոտը՝ սրտա- ձորի մը մէջ շինուած Պոռ հայ գիւղի վանքը :

Առանց երկար բարակ ձեւա- կերպութեան , անմիջապէս հո- վանոցնիս ձեռք առած ու մեր պաշարը Պոռ գիւղացի բէշիս Յակոբին յանձնելով , Պիթիւրի Ծաղկոտութեան թաղով , ճամբայ կեննենք : Մայիսի այդ ամենազուարթ օ- րերին , ով որ չէ տեսեր Բաղէշի գարունն ու չէ լսեր անոր հազա- րաւոր թռչնոց զեղզեղանքի հետ՝ հազարան պիւլպիւլի աննման զայլայլիկը՝ թերեւս զբաժներս չափազանց զտնէ : Այս մասին հանգուցեալ Գ. Ս. Մրուանցեանց յափշտակութիւնով մը շատ գե- ղեցիկ նկարագրած է իր Համով Հոտովի մէջ : Այդ թռչունը , այդ հազար եղանակ զեղզեղուղ պիւլ- պիւլը մի միայն Սալիսձորոյ այդ քաղաքին ու իր արուարձանների մէջն է որ կապրի ու միակ վար- զի եղանակին կ'երգէ : Աւ մայիսը անցնելուն պէս , անոր ձայնիկն ալ կը կարի , ինչպէս իր հոգե- հա որը կորսնցնող գեռատի այ- րի մը : Հազարանը ճախր սեւ ձիւրով մը բոլորած , իր զեղնա- զոյն փետուրների վրայ զգուղ թեւերը դարձեալ սեւ եղբրքով մը վերջացած , տարուան չորս ամիսները յամր ու տխուր՝ ծառ է ծառ անդադար կը թռչի , ու

սիրելին անհանգիստ փռտուղի մը պէս մայիսի անհետացած օրե- րը կերպով : Այս թռչունը բնա- կան զարմանալի ձերքով մըն ալ օժտուած է . ուրիշ թռչունների նման իր բունիկ ծառերու ծղոն- ներին ու ոստերին վրայ չը հաս- տատեր , այլ բաւական բարձր ծառերի ճիւղերէ մէկէն կսխ օրբանի նման կախուած կը յօրինէ իր բունիկն ու իր անուշ եղա- նակներով մայիսի զուարթ սիւ- քին հետ կօրօրէ իր նորածին ձագուկները՝ որոնք յունիսի մէջ արդէն թեւաւորած օգին մէջ սկսին ճախր առնել :

ՆԱՀԱ.ՊԵՏ (Շարունակելի)

Ս.Ս.ՍԱՍՏԸՐ ՎԻԷՆԱՅԻ ՄԷՋ

Մի վախճաք , բան չկայ : Ահա ե- ղելութիւնը :

Յայտնի է թէ եւրոպական մայ- րաքաղաքներու մէջ միջբրայգնա- կան հաստատութիւններ կան , որոնք ամենէն անոնի հիւանդութեանց միջբրայգները կը կրեն իրենց մէջ : Այդ անհունապէս փոքրիկ , այլ ան- հունապէս ալ վաստակուող էակները , ազատ զարգացում մը կը գտնեն հոն , կը շահանան , ինքիւրենին կը զուար- ճանան , այլ միշտ իրենց բերեղեայ բանտերուն մէջ զոյց մտաւ պայմանով :

Այս միջբրայգնական հաստատու- թիւններուն օգուտը մեծ է . եւ միշտ անոնց է որ կը պարտինք բժշկական նոր գիւտերը : Բայց որչափ քառա- կար կը գտնան անոնք , երբ իրենց փոքրիկ բանտերակներէն մէկը յա- ջողի բանտէն ազատի , եւ իրենց հասակէն չսպասուած վարպետութիւ- նով մը քանի մը անձերու փորը մտ- նալ , ինչպէս կընէին գեւերը ժամա- նակին , եւ ամբողջ քաղաքին մէջ ահ ու սարսափ տարածել :

Թէ ինչպէս միջբրայգները կրնան զուրս սպրդիլ : Միջբրայգնական հաստատութիւններու մէջ սրամիտ երիտասարդ ծառաներ կան , որոնք բժիշկներու կողմէն յատկապէս հրա- հանգուած՝ գիտեն թէ որքան վտան- զաւոր են իրենց խնամքին յանձ- նուած առարկաները : Բայց կը պա- տահի որ անխոհմտութեան մը հետե- լանքով , անոնք երբեմն ուշադիր չեն ըլլար . կամ շիջը կը կոտորեն ո- րով միջբրայգներուն բանտին զուրք բացած կըլլան , եւ կամ ապանխա- կան մանրազնին միջոցներուն կի- րառման մէջ թերանալով կը վա- րակուին :

Այս վերջին պարագան է որ տեղի ունեցած է Վիեննայի մէջ :

Պարիշ անուն ծառան , որուն յանձնուած էր հսկել քանի մը ժան- տավարկ անասուններու վրայ , հի- ւանդացի է : Եթէ զինքը քննողը Տր. Միւլլէրը չըլլար , որ Պոմպայ գացած ըլլալով լաւ կը ճանչնար հի- ւանդութեան խտանիչները , հաւա- նական է որ չպիտի հակցուէր թէ Պարիշ ժանտախտէ բռնուած է , եւ սուրը պիտի զրկուէր : Երեւակայե- ցէք հետեւանքը , անոնի ո՛չ միայն Վիեննայիներուն , այլ նաեւ գուցէ մեզ համար : Այժմ գիտնական բժիշկն ալ եւ հաստատութեան ուրիշ երկու սպասաւորներն ալ նոյն անոնի հի- ւանդութեան բռնուած են ծանրա- պէս : Բայց ամենքն ալ ամփոփ տեղ մը կը գտնուին , այնպէս որ կարելի պիտի ըլլայ անոնի համաճարակը բնաջնջել արմատական կերպով :

—)(—

Ք Ր Ո Ն Ի Կ

—)(—

Պոլսոյ Գրեթական Յանձնաժո- ղովը վերակազմուած է : Յայտնի է թէ այս Յանձնաժոյղը անդիէն ասդիէն դասադիրք ճարելով , Հայաստանի աղքատիկ դպրոց- ներուն կը շրկէ :

—Կաթողիկոսին յանձնարարու- թեան վրայ , մշեցի չորս աղքա- արիկ անոք տղաք Էլմիսիանի Գէ- որգեան ձեռնարանը գրուած են :

—Կարինի հայերը տեսնելով թէ պաշտօնով հոն գացող Պոլ- սեցի վարժուհիները իսկոյն կա- մուանանան , որոշեցին յատուկ դասընթաց մը սահմանել տեղացի աղջիկներէն վարժուհի հասցնե- լու համար :

—Դուրեան Տ. Եղիշէ վարդա- պետն ալ մօտերս էլմիսիան պի- տի երթայ եպիսկոպոս ձեռնադ- րուելու : Միշտ իր գրքերուն վրայ հակած՝ այս արժանաւոր ե- կեղեցականը զբամ գիւղելու մի- ջոց չէ ունեցած . ուստի կը կար- ծուի թէ իր ուղեւորութեան և այլ ծախքերը Արմաշի վանքին և կամ Պատրիարքարանի կողմէ պիտի հոգացուին :

—Ամերիկայի Միջիկան քաղա- քի երկրագործական թերթը զո- վեառով կը խօսի երկու հայ ու- տանողներու մասին , որոնք վեր- ջերս ընդունուած են տեղւոյն երկրագործական քոլէճին մէջ : Ուսանողներէն մին Վառնայէն է , Պետրոս Թաղուբան . իսկ միւսը՝ Մուշեղ Մինասեան , Կար- նեցի : Այս վերջինը , երբոր ի- րեն հարցուեր է թէ ինչպէ՞ս կը գտնէ Ամերիկան , պատասխանե- ր է . «Ամերիկան զեղեցիկ երկիր մըն է , Փրանսաէն ալ զեղեցիկ . ու ես կը սիրեմ զայն ինչպէս նաեւ քոլէճը . բայց , ներքեցէք , հայրենիքս ամենէն աւելի կը սիրեմ» :

—Պոլսոյ ուսական Հիւպա- տոսարանի թարգման Մ. Աբե- թիկ նէվրուզ , մեռաւ , 65 տա- րեկան հասակին մէջ : Դեռ պա- նատան և հիւպատոսարանի ամ- բողջ պաշտօնէութիւնը քերական գտնուած էր յուղարկաւորու- թեան :

—Ակնցի Տիկին Սրբուհի Նա- ճարեան , որ այս պահու Սրբըն- կայ կը գտնուի , 50 օսմանեան ոսկի Նուիրեր է Աղգ. Հիւանդա- նոցին , ի յիշատակ իր մեռած ա- մուսնին :

—Պատ. Ամիրխանեանց Վառ- նաի մէջ սկսած է հրատարակել «Կարգա» թերթիկը՝ որ լրագիր չէ այլ անկանոն և ազատ կեր- պով կելլայ , տրամալներուն քրիստոնէական միութարութիւն , հաւատացեալներուն լոյս և զօ- րութիւն , աշխատասէրներուն մտածութեան նիւթ տալու նպա- տակով :

—)(—

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԵՐ

ՍԵՐՊՈՒՆ ԵՒ ԹՈՒՐԻՆԻՍ

Լոնտոնի թերթերը կը գրեն թէ Սերպիոյ յուլիս 28ի ծանուցապարհին Թուրքիոյ տուած պատասխանը մեծ ցասում առաջ բերեր է Պոլսոյ սերպիական դեսպանատան մէջ :

Արդարեւ սերպ ծանուցադիրը կը թուէր 91 ոճիրներ , որոնք գործուած էին Քոստովաի նահանգին մէջ , իսկամ ալպանեացիներու ձեռքով : Մինչդեռ Սաստէտին փաշայի բացած քննութիւնը հինգի կը վերածէ այդ թիւը և ասոնք ալ աննշան բաներ . . . :

Թուրք ծանուցադիրը կը յանգի սա հեզնական եզրակացութեան թէ սերպ կառավարութիւնը խաբուած ըլլալու է այնպիսի անձերէ , որոնք նոյն գաւառին գանազան աղագրեակութեանց մէջ խռովութիւն ձգել կը փափագին :

ԿՐԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

«Սգանտարա» կը յայտնէ թէ Սուլթանը միաք ունի եղբոր իր սիրելի եղբայրը , Մուհամմէտ Ալին Կրէտէի կառավարիչ առաջարկել : Արդ , ահագին անշքը պետներ կան եւրոպեան անողոք պահանջումներուն և այս անհեթեթ առաջարկին մէջ , որ դիւանագիտական աշխարհի մէջ հեզնութեան ահագին քրքիլ մը բարձրացնելէ ուրիշ բանի չպիտի ծառայէ :

Իրողութիւնը սա է թէ թուրք զինուորները կազմ և պատրաստ են հրաժեշտի վերջին ուղւոյնը տալու աւերակ կղզիին , և միայն նաեւրու կը սպասեն փոխադրուելու համար : Քանէի թուրք զինուորները արդէն Սուտաի ծովախորշը կը գտնուին :

Անգլիական պատերազմական ատենին վճռով մահուան դատապարտուած եօթ իսլամները վերջերս կախապան բարձրացան Քանէի մէջ : Ասոնցմէ երեքը անգլիական երկու զինուորներ սպանած էին , իսկ միւսները հիւանդներ խողովոյցած էին անգլիական հիւանդանոցին մէջ : Այս մահու պատիժները խորին տպաւորութիւն մը առաջ բերած են իսլամներու մէջ : Վերջին վայրկեանին , թուրք կառավարիչը վճռին գործադրութեան դէմ բողոքած է , սա պատրուակով թէ կը փափագէր խնդիրը կանխապէս Գրան իմացնել : Բայց անգլիական իշխանութիւնները անոր միջամտութիւնները բացարձակ մերժեցին :

Մովակալները իրենց կառավարութիւններուն համանման հեռագրեր ղրկեցին , ծանուցանելով թուրքերու մեկնելէն ետքը , այսինքն նոյնմբեր 4ին (Ը. Ե.) , թէ կղզիին առժամայ կառավարութիւնը իրենք պիտի ստանձնեն , և բոլոր բարձրագոյն հրամանատարներուն մէջ մէկ բաժին պի-

տի յատկացնեն , կառավարելու համար զայն իրրեւ ծովակալներու ներկայացուցիչներ : Քանէն այժմեան հրամանատարին անօրինութեան ներքեւ պիտի մնայ , իսկ գառական և գանձային վարչութիւնները գարձեալ յանուն ծովակալներու պիտի գործեն :

Ուրիշ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սուլթանի նախաձեռնութեամբ , նախարարական խորհուրդը որոշեր է Կրէտէի համար կայսերական քոմիտէութեան պաշտօն մը ստեղծել , ինչպէս կայ Եգիպտոսի մէջ : Այս խնդրանքն ալ չորս մեծ պետութեանց հաւանութեան պիտի ենթարկուի :

— Թուրք զինուորներու փոխադրութիւնը սկսած է Քանէի , Քանտիաի և Բէթիմի մէջ : Զինուորները գիշեր ատեն նաև կը նստին , ժողովրդին թշնամական ցոյցերէն զերծ մնալու համար :

Քանէի արեւելեան ծայրը զբնուած ամբողջ ֆրանսական զօրքերու կողմէ գրաւուած է :

Ռուսերը Բէթիմի վարչութիւնը ձեռք առած են :

Բոլոր թուրք պաշտօնեայները պիտի փոխուին , զօրքերուն մեկնելէն անմիջապէս ետքը :

Տէյլի Թէլէկրաֆ կը գրէ թէ Զարը իր Պոլսոյ դեսպանին պաշտօն ուեր է իմացնելու Սուլթանին թէ որոշած է Կէօրկիոս իշխանը Կրէտէի կառավարիչ անուանել :

ԱՆՏՆՈՅՉԻ ՖԵՐՊԱՆՏ

Գերմանացիները ամբողջ աշխարհը գրաւել կուզեն . ոչ աւելի ոչ պակաս : Երբեք ազգ մը ծաւալելու այնքան ձգտում չէ ցոյց տուած , որքան տետոն ցեղը 71էն ի վեր , երբ աղգային միութիւնով , զօրութեան բարձունքը թեւակոխեց :

«Ֆէրպանդ» համագերման ընկերակցութիւն մըն է որ վերջերս Միւնիխի մէջ համաժողով մը գումարեց , աշխարհի չորս կողմերէն եկած պատուիրակներու ներկայութեամբ : Այս մարմինը կըսէ թէ 1871ի դէպքերը կիսովին միայն իրագործեր են աղգային բազմանքը և թէ Գերմանիոյ սահմաններէն դուրս , գեւ միլիոնաւոր գերմաններ կան որոնք մայր-հայրենիքի իրաւ ստեղծեան տակ չեն :

Ահաւասիկ Ֆէրպանտի . . . համաս պահանջները : Աւստրիոյ և Զուիցերիոյ գերման գաւառները գրաւել . նոյնպէս Ռուսիոյ Պալթիկեան գաւառներու գերմանական մասը . հապա հոլանտան որ գերման ցեղին կը պատկանի և Պէլճիոյ Ֆիլէմէնքները ինչու գուրս ձգուին համագերման միութեանէն , նամանաւնդ որ այս միացումով , այնքան զալթային երկիրներ ալ , Գօնկօ և այլն միացած պիտի ըլլան գերմանիոյ : Հապա թրանսվալի պօէրները որոնք նոյնպէս գեր-

մաններ են : և վերջապէս ինչու Փոքր-Ասիան որ 15 միլիոն ժողովուրդ կրնայ սնուցանել , գերման ընտանիքներով չը լեցնել . . . :

Եւ իլլուամն աղետից ընկերութիւնը ստիպողաբար կը խնդրէ որ , եթէ հարկը պահանջէ , Գերմանիոյ կառավարութիւնը չվարանի զէնք շարժելու եւրոպաի և Ամերիկայի ժողովուրդներու դէմ . . . :

ԽՆԴԻՆ ԼՈՒՐԵՐ

Պոլսոյ ֆրանսական դեսպան Պ. Քամպոն , որ Լոնտոնի դեսպան ընտրուած է , ծանուցեր է պալատան թէ Պոլսէ չպիտի մեկնի մինչեւ որ ֆրանսական ինչ ինչ գործեր կարգադրուած չըլլան . այս գործերուն կարգէն են այն փաստաց հատուցումները չորս ֆրանսահպատակները կը պահանջեն , Պոլսոյ և Հայաստանի շարքերու ժամանակէն :

— Երբ Վիլհէլմ կայսրը և Սուլթանը պալատ կերթային , ինչու ճակ տէրվիչ մը ամբողջին մէջէն առաջ կը նետուի աղբրագիր տալու դիտումով : Այս անմեղ յարձակումը վեհապետներուն մեծ վախ կը պատճառէ . նամանաւնդ որ ոտակալները մեծ դժուարութիւնով կը յաշտին զսպել խեղճ տէրվիչը :

— Տրէյֆլուրի գատին , վերաքննութեան թուական ընտրուած է ներկայ ամսոյ 15 ր :

— Կրտսի թէ Վիլհէլմ կայսրը իր եգիպտական ուղեւորութիւնը այն պատճառով յետաձգեր է , որ խաղիվ կուղէն աւստրիական օգտուել , անգլիացոյց դէմ աղգային ցոյց մը կատարելու : Տէյլի Քրօնիքը շատ կճու յոգուածներ հրատարակած է «այս գեւառի պարտնին դէմ որ իր գիրքը անգլիոյ կը պարտու» :

— Սերպիական վերջին ռազմափորձերը , որոնք պուլկարական սահմանազխի շատ մօտերը տեղի ունեցան , առիթ տուին սերպ հարիւրաւոր զինուորներու պուլկար հողը ապաստանելու : Այս գասալիքները հիմա Ռօման Բլէֆլա-Շումլա երկաթուղւոյ գծին վրայ բանորութեամբ կը շրջուին :


— Փաշտաի խնդրին վերաբերել զեղին տետրակը , անցեալ կիրակի օր , խորհրդարանի անդամներուն բաշխուեցաւ :

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐՐՈՐԴ ԹԱՂ , ԹԻՒ 66

Պատկալական հիւպատոսարանին դիմաց

Այս հաստատութիւնը որ տարիէ մը ի վեր գիրքեր կը մատակարարէ ընթերցասէրներու , նոր գիրքերով ձօնացած կը շարունակէ բաց մնալ ամէն Գշ . եւ կիրակի ժամը 1—5 . իսկ եւ կէս օրէ ետքը միմիայն կանանց համար :



ՌՈՒՆԻՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ ՆԻՔՈՒԱ ԳՐԱԿԻՎ—ՎԱՌԵԱ

Գլխաւոր գործակալ Սօֆիա Բալախի կառավարութեան կողմէն երաշխաւորուած վիճակահանութեան

Պատու ունի ծանուցանել Վառնաի և շրջակայից արգոյ հասարակութեան թէ արդէն ի վաճառ հանած է սոյն վիճակահանութեան ստուերը , իրենց բախը փորձել ուղղուելու կը հրաւիրուին դիմել վերոյիշեալ գրասենեակը այդ ստուերէն գնելու համար : Փափագողներու ձրիաբար կը ղրկուի վիճակահանութեան յայտագիրը և ամէն յարակից տեղեկութիւններ : 2—6

ԽՐԱԿՐՈՒԹԻՒՆ «ՆԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորուն , հասցէտուն , նամակագրուի , հարուանկան հրաւիրագիր , մահազգ , ինչպէս նաև պրօշուալներ :

Գինն ըն յոյժ զլւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին :

ՎԱՐՊՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ)

—) (—

(Գին 1 Ֆրանկ) (

Մնացած սակաւթիւ օրինակները կը ծախուին Վառնաի մէջ Շարժումի իմրապատուներ , Ֆիլիպէ Տ. Անտօն կոչի մօտ . Ռուսչուք Հայկ Մալախեանի սրճարանը , Սօֆիա՝ Տ. Մուշկ Արժուտիի քով :

Մօտերս մամուլին կը յանձնուին նոյն հեղինակին «Բանութեան զոհերը» :

ՊՕՐՍԱ

Վառնա 13 Հոկտեմբեր

ՊՈՒՂՏԱՅ

Վազօն , լիպրա 55—58 , հէքթօլ 9.20—8.90 ֆրանք
Արապա , լիպրա 55—60 , հէքթօլ 9—11.40 ֆրանք

ԱՐԲԱ

Լիպրա 42—50 , հէքթօլ 5.40—5.60 ֆրանք

ԵՈՒՂԱՅ

Կիւնտէ 20—25 արապա կէլմէքտէ տիր 5—5.30 ֆրանք

ՏԱՐԸ

Կիւնտէ 5—6 արապա կէլմէքտէ տիր 58—60 լիպրա , 4.60—5 ֆրանք

ՖԱՍՈՒԼԵՍ

Կիւնտէ 70—80 արապա կէլմէքտէ տիր 100 օգգասը 15—21 ֆր . մալա կէօրէ :

Առապա մուամէլէսի նաբօլէտն 21 ֆրանք հիսապը իլէ տիր .

Կիւնտէ 20—25 վազօն , 150—200 արապա պուղտոյ , 70—80 արապա արբա կէլմէքտէ տիր :

« Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ »

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալա , թանկ կէօղիպէօյի քեանի խանութը , եւ Ապաիւրրահման մզկիթին զէմը հայկական գրատունը : Ա. Զարպանէլեանի քով :